Արձանագրություն N 2

<<ՇՄԱՀ-ՍԾ-ԳՀԱՇՁԲ-21/10>>ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

գ.Ախուրյան <<14>> <<հուլիսի>> 2021թ.

ժամը 15:00

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, քարտուղարը գնման մասնակիցները և նրանց ներկայացուցիչները:

Հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հայտարարեց նիստի բացման մասին:

1. «ՇՄԱՀ-ՍԾ-ԳՀԱՇՁԲ-21/10» ծածկագրով գնման հայտերի բացման նիստը անցկացվում է ՀՀ Շիրակի մարզ,գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 42 հասցեում, Ախուրյանի համայնքապետարանի երկրորդ հարկի N11 սենյակում:գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:Գնման առարկան է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան խոշորացված համայնքի Բասեն բնակավայրի խմելու ջրի ջրագծի անցկացման աշխատանքների ձեռք բերումը:

2. Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտերի գրանցամատյանում գրանցվել է 5 հայտ.

N	Մասնակցի անունը	Մասնակցի հասցեն	էլ.փոստ
1.	<<Լենճանշին>>ՍՊԸ	ՀՀ,Շիրակի մարզ,գ.Ախուրյան,Չարենցի 6/4	lenchanshin@mail.ru
2.	<<Շին Ստար>>ՍՊԸ	Ք.Գյումրի ,Կոմիտասի 1 նրբ.22	shinstar2015@mail.ru
3	«Անդրեաս և ընկերներ»ՓԲԸ	Ք.Գյումրի,Լ.Մադոյան 287	sos.andriasyan@mail.ru
4	<<Արմար Գրուպ>>ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ,ք.Վանաձոր փ.Տերյան շ6 բն23	arenmart@mail.ru
5	«Վայք Գրուպ»ՍՊԸ	Ք.Երևան,Էստոնական փ.9բն28	vaykgroup@mail.ru

Ըստ գնահատող հանձնաժողովի հայտեր պարունակող ծրարներից 4-ը կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան, իսկ «Վայք Գրուպ»ՍՊԸ-ի հայտը մերժվեց հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու պատճառով:

3. Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ՇՄԱՀ-ՍԾ-ԳՀԱՇՁԲ-21/10»ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացրած 4 հայտերը կազմված էին գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Ներկայացրած բոլոր փաստաթղթերը կազմված էին բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

4.Նիստին ներկա անդամների և գնման մասնակիցների համար հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հրապարակվեց հրավերի պահանջներին համապատասխանող մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները:

5. Հրավերի պահանջներին համապատասխանող հայտերով ներկայացրած գնային առաջարկները՝

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Գնային առաջարկը /առանց ԱԱՀ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
1	«Լենճանշին»ՍՊԸ	37322224	44786669
2	«Շին Ստար»ՍՊԸ	37500002	45000002
3	«Անդրեաս և ընկերներ»ՓԲԸ	38474669,20	46169603.10
4	«Արմար Գրուպ»ՍՊԸ	38444172	46133006

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

. Հայտերի բացման նիստի ժամանակ մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, քանի որ նիստին ներկա էին բոլոր մասնակիցների ներկայացուցիչները:Բանակցության համար մասնակիցներին տրվեց տասնհինգ րոպե ժամանակ/երեք քայլ/, գները հաշվարկվեցին առանց ԱԱՀ, որի արդյունքում.

I քայլ/5 րոպե/ «Լենճանշին»ՍՊԸ -37100000, «Շին Ստար»ՍՊԸ-37100000, «Անդրեաս և ընկերներ»ՓԲԸ - 36500000 «Արմար Գրուպ»ՍՊԸ-37300000

II քայլ/5 րոպե/ «Լենճանշին»ՍՊԸ -36400000, «Շին Ստար»ՍՊԸ-չմասնակցեց, «Անդրեաս և ընկերներ»ՓԲԸ - 36000000 , «Արմար Գրուպ»ՍՊԸ-36350000

III քայլ/5 րոպե «Լենճանշին»ՍՊԸ -35700000, «Շին Ստար»ՍՊԸ-35000000, «Անդրեաս և ընկերներ»ՓԲԸ - 33000000 «Արմար Գրուպ»ՍՊԸ-36350000:

«ՇՄԱՀ-ՄԾ-ԳՀԱՇՁԲ-21/10»ծածկագրով գնման ընթացակարգի համար ընտրված մասնակից ճանաչվեց «Անդրեաս և ընկերներ»ՓԲԸ-ն-33000000 ՀՀ դրամ/նվազեցված գին,առանց ԱԱՀ/,իսկ հաջորդաբար առաջին և երկրորդ տեղերը զբաղեցրին.համապատասխանաբար «Շին Ստար»ՍՊԸ և «Լենճանշին»ՍՊԸ:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց և հայտարարեց ընտրված մասնակցին , առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

Որոշումը ընդունվել է 4 կողմ, 0 դեմ, ձայներով:

3.Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության, հայտերի գրանցամատյանի, հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության, ընտրված մասնակցի հայտով ներկայացրած հավելված 1-ի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Որոշումը ընդունվել է 4 կողմ, 0 դեմ, ձայներով:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները,ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ Լիպարիտ Տիգրանյան

անդամներ՝ Ռուբիկ Քաբաբյան

Սամվել Սարգսյան

Ռոման Համայակյան

քարտուղար՝ Անահիտ Յավրումյան